

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2013 թվականի ապրիլի 25-ի Քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած անձանց կամ հղի կանանց կամ խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ կարող է նշանակվել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ, եթե սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված ամենամեղմ պատժատեսակը կալանքն է, և նախատեսված մյուս պատժատեսակների նշանակումը դատարանը գտնում է ոչ համաչափ, կամ կարող է նշանակվել համապատասխան հոդվածով նախատեսված մյուս պատժատեսակներից որևէ մեկը, սակայն տվյալ պատժատեսակի համար համապատասխան հոդվածով նախատեսված նվազագույն չափից ավելի ցածր չափով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈՂՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 62. Օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը

1. Հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելու դեպքում կարող է նշանակվել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով, կամ չկիրառել որպես պարտադիր նախատեսված լրացուցիչ պատիժ:

2. Բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը:

3. Դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած անձանց կամ հղի կանանց կամ խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ կարող է նշանակվել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ, եթե սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված ամենամեղմ պատժատեսակը կալանքն է, և նախատեսված մյուս պատժատեսակների նշանակումը դատարանը գտնում է ոչ համաչափ, կամ կարող է նշանակվել համապատասխան հոդվածով նախատեսված մյուս պատժատեսակներից որևէ մեկը, սակայն տվյալ պատժատեսակի համար համապատասխան հոդվածով նախատեսված նվազագույն չափից ավելի ցածր չափով:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.	<p align="center">Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը</p>
	<p>«Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Քրեական օրենսգրքի 55-րդ և 62-րդ հոդվածների համակարգային վերլուծության արդյունքում դրանցով նախատեսված իրավակարգավորումների միջև ի հայտ եկած որոշակի խնդիրների լուծմամբ:</p> <p>Այսպես, Քրեական օրենսգրքի՝ «Կալանքը» վերտառությամբ 55-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Կալանքը չի նշանակվում դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած անձանց կամ հղի կանանց կամ խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ»:</p> <p>Մարդասիրական դրդումներով նախատեսված այս նորմը, սակայն, իրավակիրառ պրակտիկայում որոշ դեպքերում կարող է հանգեցնել դրանում ընդգրկված անձանց նկատմամբ ավելի խիստ և անհամաչափ պատժի նշանակման: Հիշյալ խնդիրն առաջանում է այն դեպքում, երբ համապատասխան հոդվածի սանկցիան կալանք և ազատազրկում պատժատեսակներից բացի, այլ պատժատեսակ չի նախատեսում, որպիսի պայմաններում տվյալ անձի նկատմամբ կիրառելի է դառնում միայն ազատազրկումը, ինչն ավելի խիստ պատժատեսակ է, քան կալանքը: Օրենսգրքի ուսումնասիրությունից հետևում է, որ նման խնդիր առկա է թվով 21 հանցակազմերի դեպքում (Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին, 113-րդ հոդվածի 2-րդ, 245-րդ հոդվածի 1-ին, 279-րդ հոդվածի 1-ին մասեր, 294-րդ հոդված, 307-րդ հոդվածի 3-րդ, 320-րդ հոդվածի 1-ին և 2-րդ, 347-րդ հոդվածի 1-ին և 2-րդ, 348.1-րդ հոդվածի 2-րդ մասեր, 349-րդ հոդված, 374-րդ հոդվածի 1-ին մաս, 382-րդ հոդվածի 4-րդ մաս, 387-րդ հոդվածի 1-ին և 2-րդ, 389-րդ հոդվածի 1-ին և 3-րդ, 390-րդ հոդվածի 1-ին, 394-րդ հոդվածի 2-րդ, 394.1-րդ հոդվածի 1-ին մասեր): Ազատազրկում պատժատեսակի նշանակումը կոնկրետ գործով ոչ համաչափ գնահատելու դեպքում դատարանին ոչինչ չի մնում, քան Օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ նշանակել նախատեսվածից մեղմ պատիժ՝ անգամ դրա հիմքերի բացակայության դեպքում անձի իրավունքների խախտում թույլ չտալու նպատակով (Մասնավորապես, Օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքների հետ կապված այնպիսի բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք էականորեն նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև խմբակային հանցագործության մասնակցի կողմից խմբի կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելու դեպքում կարող է նշանակվել օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով, կամ չկիրառել որպես պարտադիր նախատեսված լրացուցիչ պատիժ: Բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը): Օրենսդրի կողմից վերը հիշատակված հանցակազմերի սանկցիաների սահմանման նման իրավակարգավորումը հանգեցնում է գործնական խնդիրների այնքանով, որքանով դրանցում չի նախատեսվում կալանք պատժատեսակից ավելի մեղմ պատժատեսակ:</p>
2.	<p align="center">Առաջարկվող կարգավորման բնույթը և ակնկալվող արդյունքը</p>
	<p>Սույն օրենքի նախագծով նախատեսվում է Քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածը լրացնել</p>

	<p>հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով՝</p> <p>«3. Դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած անձանց կամ հղի կանանց կամ խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ կարող է նշանակվել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ, եթե սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված ամենամեղմ պատժատեսակը կալանքն է, և նախատեսված մյուս պատժատեսակների նշանակումը դատարանը գտնում է ոչ համաչափ, կամ կարող է նշանակվել համապատասխան հոդվածով նախատեսված մյուս պատժատեսակներից որևէ մեկը, սակայն տվյալ պատժատեսակի համար համապատասխան հոդվածով նախատեսված նվազագույն չափից ավելի ցածր չափով»:</p> <p>Նման կարգավորումը հնարավորություն է տալիս դատարանին խուսափել այնպիսի իրավիճակներից,</p> <p>1. երբ 55-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով չկարողանալով կիրառել կալանք պատժատեսակը, ստիպված էր լինում կիրառել ավելի խիստ պատժատեսակ՝ ազատազրկում՝ դրանով իսկ ի չիք դարձնելով նշված մարդասիրական նորմի հետապնդած նպատակը, կամ</p> <p>2. երբ, ղեկավարվելով Սահմանադրության 71-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով (ԱՀ Սահմանադրության 71-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքով սահմանված պատիժը, ինչպես նաև նշանակված պատժատեսակը և պատժաչափը պետք է համաչափ լինեն կատարված արարքին) ազատազրկում պատժատեսակի նշանակումը կոնկրետ գործով ոչ համաչափ գնահատելու դեպքում դատարանին ոչինչ չէր մնում, քան Օրենսգրքի 64-րդ հոդվածի կիրառմամբ նշանակել նախատեսվածից մեղմ պատիժ՝ անգամ դրա հիմքերի բացակայության դեպքում անձի իրավունքների խախտում թույլ չտալու նպատակով:</p> <p>Նախատեսվող կարգավորումը ազատազրկում պատժատեսակի կիրառումը ոչ համաչափ համարելու դեպքում դատարանին օրենսդրորեն հնարավորություն է ընձեռում նշանակել ավելի մեղմ պատիժ:</p>
	<p>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք</p>
	<p>Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժնի կողմից:</p>

ԱՐՑԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ